Ինչո՞ւ կու գայ Պօլիս։

Չհարցուցի, վասնզի քանի մը տարիներ առաջ հարցուցած էի, թէ ինչո՞ւ Սիս կ'երթայ, եւ պատասխան առած էի, թէ Սսոյ աթոռն ու թեմն բարեկարգելու կ'երթայ։ Քանի մը ամիս ետքն, երբ իմացայ որ զիս խաբած են՝ ուխտ ըրի, որ մէյ մ'ալ չհարցունեմ, թէ ինչո՞ւ Պօլիս կու գայ եւ ինչո՞ւ Պօլսէն կ'երթայ…։

10 Նոյեմբեր

Ուրիշ հրաժարական մ'ալ։

Երզնկայի առաջնորդն ալ հրաժարելու միտք ունի եղեր։

Հոն ալ չկայ մարդ, զգացում եւ դրամ։

Երզնկայի կլիմայն անյարմար կու գայ եղեր նորին սրբազնութեանն։

Այս առաջնորդին ալ կլիմայ մը փնտռելու, գտնելու եւ ղրկելու է։

Յուսանք սակայն, որ Երզնկայի առաջնորդը անիրաւ յարձակումներէ առանց վշտանալու յառաջ կտանի այն գործերն, զորս այնքան սիրով եւ եռանդեամբ սկսաւ։ Եթէ կլիմայն իրեն չյարմարուի՝ նորին գերապատուութիւնն աշխատելու է զինքն կլիմային յարմարցունել, զի մի լցցի բանն, թէ վարդապետներն կփոխեն իրենց կլիմայն՝ երբ եպիսկոպոս ձեռնադրուին…։

11 Նոյեմբեր

Տեսարանն է Բերայի թատրոնի մը օթեակներէն մէկուն մէջ։

Պատուաւոր մարդու մը անպատիւ կինն յոյնի մը հետ սիրոյ բանակցութիւն կ'ընէր։

–Տե՛ս, ըսաւ քովի օթեակի մէջ նստող մէկն իւր ընկերին, կը վայլէ՞ որ անանկ պատուաւոր մարդու մը կինն անհաւատարիմ գտնուի իւր էրկանը։

–Իրաւունք ունիս. օտարասիրութիւնը չէ՞ որ մեր ազգին տունը կփլցնէ, պատասխանեց ընկերը։

12 Նոյեմբեր

–Ամբակո՛ւմ աղա, վաղը չէ միւս օր Վան պիտի երթամ։

–Բարի ճանապարհ կմաղթեմ։

–Նամակ գրելու չմոռնաս։